

1584

I.

4

1584

48









ՏՆՕՐԷՆ-ԻՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

ՏԱՐԻ ԹԻՒ 1 ՇԱՐԱՐ 1 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1907

ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ

ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ

ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ



ՋԵՆԻԹ

ՄԵԾ ՄՐՑԱՆԱԿ ԲԱՐԻՋ, 1900

ԱՌԱՋԻՆ ՄՐՑԱՆԱԿ. — Նեոստիլի դիստրիբյուտ. 1903  
ԱՐՏԱՔՈՑ ՄՐՑԱՆԱԿ. — Անդամ ժուռնալի. Միլան. 1906  
ԵԻՆ. ԵԻՆ. ԵԻՆ.

ԱՄԷՆ ՄԵՏԱՂԷ ԵՒ ԱՄԷՆ ՄԵԾՈՒԹԵԱՄԻ

ԸՆԳԶ. ՇԵՐԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՈՒՐՔԱՆԵՐ ԶԱՄԱՐ:  
Գ. ՄԱՐԳՐԻՍՅԱՆ ԵՒ ԸՆԿ.

Մեծ վաճառատուն ժամացույցներու, շրթա-  
ցներու եւ գոհարեղէններու

ԹԻՒ 16 = ՊԱՆԶԷ-ԳԱՐՈՒ = ԹԻՒ 16

Օռոգար-Պար հաստատութեան գիմնացը

Ի Բերա, Կ'գանուի գոհարավաճառ Տ.՝ Տ.՝ ԷՖՄԷԴՅԱՆ ԵՂԲԱՐՑ ԷՐՈՎ,  
ԹԻՒ 400 Մեծ-փողոց.


ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ

(آ. آصاوریان) شرکت صتیبه مطبعه — باب عالی جاده سنده نومرو ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապր-Ալի ճառարի թիվ 52

Հատը 40 փարսա



Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի  
փանգամայն մեխանիկ  
կը գտնուի

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

**Ս Ի Ն Կ Է Ռ**

**ՀԱՅԹԱՅԹԻՔ ԿԱՅԺ. ՊԱԼԱՅԱՆ**

**THE SINGER**

**MANUFACTURING COMPANY**



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարեւորորոշմամբ, հաստատունը եւ գիւրագործելին ըստուրն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենանները կը ծախոին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՀԱՅԹԱՅԹԻՔ ԿԱՅԺ  
ՍԻՆԿԵՐԻ ՄԵՔԵՆԱՆՆԵՐ

- |               |                                                        |
|---------------|--------------------------------------------------------|
| <b>ԲԵՐՍ</b>   | ( 1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
|               | ( 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ .             |
| <b>ԿԱԼԱԹԱ</b> | ( 1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը .                       |
|               | ( 2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ .                |
| <b>ՊՈԼԻՍ</b>  | ( 1. Սուլթան համամ .                                   |
|               | ( 2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| <b>ՍԵԻՍԱՐ</b> | Զարը Պօյու, թիւ 120 .                                  |

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաճիւղեր գաւառներու բոլոր ֆաղսֆներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին՝ կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 և 43 կրկին, Տիւզդուլուի տունը:



**ՐԵԻԵԼՔ**

ՕՐԱՆ

գային, գրական եւ ֆաղափական :  
որդագրութիւն՝ տարեկան 4. Պոլ-  
30 դրուշ, գաւառներու համար  
տար երկիրներու համար 35 ֆր. :  
առում՝ տար փառաւ. Հասցէ՝  
Համաձայն փողոց: **ՐԵԻԵԼՔ**  
հրատարակէ ամէն օր, կէս օրին, խը-  
նասիրութեամբ, ընտիր յօդուած-  
ներով, լուրերով ու նորագոյն տեղե-  
կութիւններով:

**ԱՐԵԻԵԼՔ**, իր վերակազմուած խմ-  
բագրութեամբ և իր կարող աշխատակիցնե-

րով, առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տե-  
ղական հայ մամուլին մէջ, օր աւուր աւելի  
հրապուրիչ դառնալով՝ նորանոր բարեօրոշ-  
մներու շնորհիւ զորս ներմուծած է թերթին  
մէջ: Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏ-  
ԿԵՐԱԶԱՐԴ ըլլալու հանդամանքը, որով իր  
ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերա-  
բար: Ծանօթ Դէմքեր և Լրբեմն ալ տեսա-  
բաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մա-  
նագիտական յօդուածները, եկեղեցական,  
կրօնական, տնտեսական-սեղանաւորական,  
երկրագործական, իրաւաբանական եւայլն,  
բայ ի գրական, բանասիրական գրուածքնե-  
րէ, օրուան տեսութիւններէ ու Զուարթ նօ-  
թերէ, որոնք նիւթերու ճոխ պէսափսութիւն  
մը կը կազմեն:



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ I

ՇԱՐԱՐ

I ՍԵՊՏԵՄԲԵՐ 1907

## “ՓՈՐԻ ՑԱԻ,,

Երբ այս տողերը կը շարունակն հոս, արդէն մեր վարժարանները բացած են իրենց դռները ուսանողներու առջեւ, որոնց գրեթէ ամէնուն ներսէն կանցնի մեր վերնագիրը՝ փոքրիկ ցաւը:

Յունիսի վերջերէն մինչեւ այսօր, դպրոցական պղտիկներ՝ ինչպէս նաեւ պատանիներ, հեռու կրթական յարկին ճնշող մթնոլորտէն, հոս հոն, գիւղերու արուարձաններու կազդուրիչ ու չէնչող զբօսանքներուն յարած ու փարած, մոռցած էին պահ մը՝ դիրն ու գիրքը, վարժապետն ու սնորէնը, ու հիմա, Սեպտեմբերի ներկայ ամիսին, երբ ծնողք իրենց զաւակներուն ձեռքէն բռնած դէպի կրթական տունը կ'առաջնորդեն, ընդհանուր փորի ցաւ մը կը լլկէ, կը ցնցէ այդ մատաղ հոգիները, ու տեսակ մը դժկամակութեամբ է որ կ'ուղղուին անոնք՝ դէպի իրենց ոստանը, ապագայ ձուլարանը:

Սովորական դարձած այս «փորի ցաւ» բացատրութիւնը թէեւ առկօ բացատրութիւն

մըն է, տղուն դպրոց երթալ չուզելուն համար ըսուած, սակայն ճշմարիտ է: Տղան իրօք ֆիզիքապէս իր մէջ ցաւ մը չզգար, սակայն բնական դժկամակութիւն մը զինքը կը նեղէ, հիւանդութեան նուազի մը պէս բան մը կիճանայ ան, ու բարոյապէս կը ցնցուի, ինչպէս ըսինք, երբ իր ետին կը թողու ծնողական չիացած տունն ու օղակ տուրիւնը, զբօսանքն ու զուարճութիւնը և կուգայ կրկին սեղմուիլ դպրոցական չոր պատերուն մէջ՝ դասատուին խռպոտ ձայնին ի լուր, գլխահակ՝ փայտէ գրասեղանին վըրայ, ամբողջ տասը երկար ամիսներ, մինչեւ նոր արձակուրդի օրերը:

Ահա այս պարագան է, որուն հանդէպ տղուն դժկամակութիւնը փորի ցաւ կը նրկատուի, թէեւ ֆիզիքապէս չունենայ այդպիսի բան մը իր մէջ:

Դպրոցական վերաբացումը տուն կուտայ մեզ քիչ մը խօսիլ այդ կրթական յարկերուն նիւթական վիճակին վրայ:

Ամէն դպրոց իր ուրոյն պիւտճէն ունի կամ պէտք է ունենայ, ըլլայ ան ազգային և կամ անհատական վարժարան:

Ծնողք ի հարկէ միշտ պահանջկոտ ըլլալով՝ կուզեն, կը փափաքին որպէս զի իրենց զաւակը զրկեն ա՛յն վարժարանը՝ ուր դաստիասութիւնք և կարգ կանոն նախանձելի վիճակ մը ունին: Այս պարագան բարեկեցիկներու համար անշուշտ, որոնք իրենց զաւակին ուսման և կրթութեան համար նիւթական ամէն զոհողութիւն յանձն կառնեն և ամենայն իրաւամբ:

Կան ալ ծնողք, որոնք միջակ դասակարգին և կամ կարելի է անկէ ալ շապիկ մը վար աստիճանովնին, կուզեն, կը փափաքին հարուստին համահաւասար կրթութիւն և ուսմունք տալ իրենց զաւակին, որոնց ձեռքէն բռնած կը բերին կը յանձնեն վարժարան, երբ Տնօրէնը և կամ Հոգաբարձու էֆէնտին կը հարցնէ իրենց.

— Թոշակաւո՞ր կուզէք թէ ձրի ...

— Ի՞նչ, ձրի՞ ... Աստուած չընէ ... զաւակիս ուսմունքին համար ինչո՞ւ պիտի խնայեմ, ինչո՞ւ ըսել տամ որ աղաս ձրի է ... պիտի տամ, պիտի տամ, քանի զրուշ է նէ ամսէ ամիս պիտի տամ ...:

Ու Տնօրէնը կամ Հոգաբարձուն կէս մը զլջացած եղած հարցումին վրայօք, անմիջապէս թոշակաւորներու կարգը դասելով՝ կարճանագրէ այդ փափկանկատ և grandiose ծնողաց զաւակը, ու տղան կ'սկսի յաճախել:

Մէկ ամիս, երկու ամիս,<sup>7</sup> երեք ամիս, տղան կը շարունակէ և փոխարէն՝ տասը, քսան դրուշի ընկալագիր մը ստորագրել խնմեք չըլլար: Բերանացի խնդրանք, գրաւոր դիմում, բոլորը ապարդիւն կը մնան ու իբր վերջին միջոց կազդարարուի տղուն, որպէս զի եթէ խօսացած թոշակը չի բերէ՝ դադրի վարժարան յաճախելէ:

Ալ բարկութիւն, լուտանք, պարսաւ ու բամբասանք իրարու կը յաջորդեն, ու այն հայրը կամ մայրը որ, իր հոգեհատորը ձրի վարժարան զրկելը amour propreին կը դպէր, կսկսի բերանը բանալ ու վար զարնել դըպրոցը, ուրիշներու գայթակղութեան պատճառ ըլլալով:

— Զօգ չէ՛յ ... տղան ետ զրկելը՝ Ի՞նչ

ըսել է ... դպրոցը որի՞ համար բացեր են ... վա՛յ վա՛յ վա՛յ ... երկու երեք ամիս փափան ետ է մնացեր, ասոր համար կեղևն չօճուիւր ե՞տ կը զրկեն ...

Այս և այսպիսի գաղափարներով սողորուած հայրերն են որոնք թէ դրամը վճարելու կը դժկամակին և թէ ձաշներն կը բարձրացնեն բողոքելու համար վարժարանին Տնօրէնութեան և կամ Հոգաբարձութեան իբր թէ անվայել, անտեղի բան մը ըրած ըլլային:

Այս կարգի խնդիրներ պակաս չեն գրեթէ ամէն թաղի մէջ, մենք հոս մասնաւորել չենք ուզեր, քանի որ այդ կարգի սխալ դատողութեան տէրեր կրնան դառնալ ամէն տեղ, ամէն գիւղ, ամէն արուարձանի մէջ:

Ձրի անունը իրաւ թէ անձնւոր գիտակցութիւն ունեցող և քիչ շատ միջակորեար ծնողաց համար ծանր է, սակայն այդ անունը փրկել ուզողը պէտք է՝ մայրը գըլխարկին փետուրէն, և հայրն ալ օղիէն զըրկուին, ու ամիսէ ամիս վճարեն թոշակը, որով միայն կարելի է անվկանդ և յարատեւ պահել վարժարանը, ըլլայ անհատական, ըլլայ ազգային:

Ահա զաւակի տէր ընտանիքի մը է՛ն նըկատելի և է՛ն առաջին պարտքը՝ ՏՂՈՒՆ ԹՈՇԱԿԸ:

#### Վ. ՓԱՓԱՁԵԱՆ

### ՎԵՐԱԲԱՅՈՒՄ

Ուրախութեամբ կը յայտարարեմք քե՛զի ողբացեալ Համբարձում Էֆէնտի Ալահանեանի ՓՈՒՆՁԸ, որ ասկէ առաջ իր տպագր. Արսօնախոյ մահուամբը դադրած էր, այս անգամ Կայսերական բարեհաճ Իրաւէ մը կարճօրէն անոր վերեւելումը, եւ քերթին սեփականութիւնը կ'անցնի իր երեց որդւոյն Սիմոն Էֆ. Ալահանեանի, Բիւրակնի վարիչ Սիմոն Էֆ. Չեմէֆեանի պատասխանատւութեան տակ առայժմ:

Ի արեւ յաջողութիւն կը մաղթեմք մեր պաշտօնակցին եւ կը խնդակցինք իրեն շնորհուած այս Բարձր հրամանագրոյն առթիւ:

Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆԻ ԷՋԵՐԷՆ

## ԱՌԱՆՑ ՕԺԻՏԻ ԱՂՋԻԿ ԿԱՐԳԵԼ

— Սիրելի ամուսինս, այս գործը շատ երկնցնելու չգար, բանի մը կապելու է, չիննայ երթայ:

— Տիկին, չիտէ՞ք որ մեծ հարուստի համբաւ ունինք և պղտիկ հարուստ անգամ չենք:

— Գիտեմ որ ստակ չունինք... բայց երիտասարդն ամէն օր կուգայ կերթայ. ինչպէս գիտէք, կը խենդենայ մեր աղջկան վրայ, աղջիկն ալ անոր վրայ կը խենդենայ, ինչ պիտի ըլլայ ասոր վերջը:

— Աստուած ողորմած է:

— Աստուած ողորմած է գիտեմ, բայց երկու տարի եղաւ:

— Մեր աղջիկը կարգելու համար առնուազն չորս հազար ոսկւոյ օժիտ տալու ենք, մեծ ճանչցուած ենք, եթէ չկարենանք տալ, մեր գաղտնիքը յայտնած կըլլանք, երեսէ կիշնանք և աւելի թշուառ կըլլանք. պահպանենք այն համբաւն և թերեւս օր մը, ինչ գիտես, անոր շնորհիւ կարենամ մեծ գործի մը մէջ մտնել:

— Ըսածդ կը հասկնամ, բայց քիչ մ'ալ նայելու է որ դուրսը ինչեր կը գրուցեն կոր այս երիտասարդին տմեկն օր հոս գալուն համար:

— Երկրորդական խնդիր է անիկայ:

— Բայ ի տակից աղջիկն ալ կը մաշի կոր, կրնայ ըլլալ որ ախտանայ, առաջին սէրը վտանգաւոր է կըսեն:

— Ինչ ընենք:

— Ինչ գիտնամ:

— Բան մը կուգայ միտքս:

— Ինչ:

— Ես կեօյա հաւանութիւն չտամ ասոնց ամուսնութեան:

— Էյ:

— Դուն ալ հաւանութիւն չտաս:

— Վերջը:

— Թող մանչը գայ, գիշեր մը փախցնէ:

— Աղէկ գաղափար, բայց աղջկան ինչպէս հասկցնելու է աս:

— Սպասուհւոյն միջոցաւ:

— Այո՛: Արդէն սպասուհին այս ճամբան ցոյց պիտի տայ եթէ համոզուի թէ մենք հաւանութիւն չենք տար այդ գործին:

— Շատ աղէկ. այս աղէկ է:

Շարաթ մ'ետքը երկուշաբթի օր մը լրագրաց մէջ կը կարգացուի:

... Երիտասարդ մը այս ինչ սկզբնատուութիւնով աղջիկ մ'առեր փախեր և հետը պսակուեր է:

Եւ հետեւեալ օրն ինչ կը խօսուի հրապարակի վրայ.

— Երիտասարդին ըրածը չը վայրեր:

— Մեղք աղջկան:

— Աղջիկը շատ պարկեշտ էր:

— Աղջիկը գլխէ հանեց խաբեբայն:

— Ո՞վ գիտէ, որքան ախուր է աղջկան հայրը:

— Մագերը փեթտէ նէ իրաւունք ունի:

— Ծերութեան մէջ այս հարուածը շատ ծանր պիտի գայ իրեն:

— Այս հարուածին վրայ չապրիր:

— Մեծցուր մեծցուր, ու խաբեբայ մը գայ գիշերը տունէն առնէ տանի:

— Մեղք եղաւ մարդուն:

— Կըսեն թէ աղջկան մայրն ալ մեծ կսկիծ զգացեր է այս դէպքին վրայ:

— Զղգար մի եա... ասանկ աղնուական ընտանիք...

— Մինչեւ հիմայ պատուով ժամանակ անցուցած մարդ մը...

— Ամենէ յարգանք...

— Ուղածին չափ հարստութիւն...

— Ոսկիներու մէջ լողալ...

— Ծոխութեանց մէջ շնչել...

— Աղնուական...

— Պատուաւոր...

— Բերնէն գէշ խօսք մը հանած չ'ունի:

— Մըջիւնին վրայ կոխելու կը վախնայ:

— Դուն եկուր տէ, անպիտան, ասանկ մարդու մը աղջիկը փախցո՛ւր.

— Ընտանեաց հօր մը համար շատ ծանր է այս հարուածը:

— Խաբեբայ:

— Լիրբ:

— Անառակ:

— Սրիկայ... պարէ բռն մ'ըլլար... ա-

նառա՛կ, ինչ ուղեցիր խեղճ մարդէն... Թող ուրիշի աղջիկը փախցնէիր... այս բանին վրայ մեծ ցաւ զգացի...:

— Ինսո՞ր ալ համոզեր ու խաբեր է աղջիկն, ինչ ալ շնորհալի աղջիկ... հայերէն գիտէ, գաղղիներէն կը գրէ, անգղիներէն կը խօսի, գերմաներէն ջուրի պէս գիտէ:

— Կ'ըսեն թէ հայրը չ'ուզեր եղեր աղջկանն երեսը տեսնել:

— Չ'ուզեր ա՛:

— Մայրն ալ կ'ըսէ եղեր որ ոտքերը կը կտորեմ անոր թէ որ տունէս ներս մտնէ:

— Դուն ալ ըլլաս նէ՛ կընես ես:

— Ի՛նչ անպատուութիւն:

— Երիտասարդին համար շատ աղէկ եղաւ, ասանկ հարուստ աղջիկ մ'առաւ և իւր ապագայն ապահովեց:

— Այո՛, աղջկան մեղք եղաւ:

— Մանչը արդէն ստակին համար առաւ աղջիկը:

— Հարկաւ:

Երկու երեք շաբաթ կ'անցնին և քանի մը հոգի կը ներկայանա, աղջկան ծնողաց երիտասարդին համար բարեխօսելու ու անոնց մէջ հաշտութիւն գոյացնելու համար:

— Տէ՛ր, բան մ'էր եղաւ գնաց, անցեալը մոռնալու է:

— Ան ալ հիմայ ձեր դաւակը կը սեպուի:

— Ամենեւի՛ն չեմ ընդունիր:

— Ես ալ չ'եմ ընդունիր:

— Ես սնիկա իբրեւ պարկեշտ մարդ կ'ընդունէի տունս, մտքէս չէի անցուներ թէ ասանկ գործ մը պիտի ընէ:

— Երեկս իրաւունք ունի... մենք ասանկ բաներ տեսած չունինք... աղջիկս ալ կը միտքեմ:

— Երեսնին տեսնալ չեմ ուզեր:

— Ես ալ, ես ալ, մենք ալ քիչ շատ աղնուական ենք, մենք անանկ մարդու աղջիկ տուողներէն չենք. իրաւունք ունի էրիկո՛ւ:

— Ժառանգութիւնէս ալ պիտի զրկեմ զինքը...

— Մենք անիկայ տասը հազար ոսկւոյ օթիտով պիտի կարգէինք:

— Վաղը անօթութիւնէ մեռնին նէ՛ ստախ մը չեմ տար:

— Թող չեմ տար որ տաս:

— Ինչ է նէ՛ հաճեցէ՛ք գոնէ իրենց հետ հաշտուիլ:

— Չեմ ընդունիր, աստ առաջարկութիւնը մի ընեք:

— Չեմ ընդունիր, ասանկ խօսք մի՛ ընեք:

Բարեխօսք կը մեկնին:

Երեք ամիս ետքը աղջկան ծնողաց կողմէն ճաշի կը հրաւիրուի փեսայն իւր կնիկովը: Հաշտութիւնն կատարեալ է:

Երիտասարդը մեծ գործի մը պիտի ձեռնարկէ. դրամագլուխի պէտք ունի. կնոջ միջոցաւ կը գիմէ իւր գոքանջին:

— Ձոքանջը կը պատասխանէ:

— Ամուսինս երդում ըրած է ստակ մը չտալ փեսին. գիտէք արդէն թէ որչափ ջերմեռանդ է, երդման վրայ հաստատ կը մնայ: Ստակի խօսքը բերաննիդ մ'առնէք:

Եւ երիտասարդը տարի մը վերջը կը հասկընայ թէ ինքը չէ փախցուցած աղջիկն՝ այլ աղջիկն փախցուցած է զինքն:

Յ. Յ. ՊԱՐՈՆՆԱՆ

## ԸՆՏԻՐ ՃԱՇԱՐԱՆ

### ՀԱՄՈՎ ԿԵՐԱԿՈՒՐ

#### ՈՒ ՄԱՔՈՒՐ ՍՊԱՍ

Ահա փնտռուած երեք տառուկութիւններ, ամէն անոնց համար՝ որոնք ցերեկին կշտանալ կուզեն կուշտ ու կուռ, ճիշդ ինչպէս իրենց տուներուն մէջ:

Այս առթիւ ջերմապէս կը յանձնարարենք ճաշարանապետ Յովսէփ աղան՝ որ երբեմն Իզմիր օթէլի կիցը կը գտնուէր, բայց հիմա փոխադրուած է Էսկի-ղապթիյէ փողոց շէքէրճի Իսմայիլ Հազըր էֆէնտիի մօտ՝ նորաչէն Բօսթահանէին կարգը, Իզմիր օթէլին տակ:

Դիմեցէք իրեն համով հոտով ճաշելու համար՝ շատ աժան գնով:

Անգամ մը փորձելը պիտի բաւէ տարիներով՝ յաճախելու համար այդ տիպար ճաշարանը:

## ՔԵՅՖՍ ԿՈՒԳԱՅ

Երբ տեսնեմ աղջիկ մը՝ որ կարմիր երեւ-  
նալու համար հաւրձե երեսներուն կամիթ-  
ներ կուտայ:

Երբ հանդիպիմ վաճառականի մը գնալ-  
եկուրճի մը որ, մէկ օրուան մէջ երեք ան-  
գամ կօշիկներուն գոյնը կը փոխէ: (Ա՛խ կօ-  
շիկներուն տեղ երեսին գոյնը փոխէր նէ ա-  
ւելի քեյֆս պիտի գար):

Երբ ներկայացման մը ամենէն յուզիչ մէկ  
պահուն, չորս ամսու լաճի մը՝ կատուի ձագի  
նման պօռալու ձայնը կը լսեմ:

Երբ տակաւին գործը չի կարգադրած սը-  
նանկացող վաճառականի մը կառքերով fureur  
ընելը կը տեսնեմ, (ատիկա պապաս ալ կ'ընէ  
օղլում ...):

Երբ վարժուհիի մը իր մէկ աշակերտու-  
հին հօրը հետ ֆօքթ ընելու վերջին նորա-  
ձեւութիւնը կը պատմեն:

Երբ ընթերցասէր օրիորդի մը անկողնոյն  
մէջ կարդացած ատենը քունը գայ և քեմե  
մը զարնէ քովը վառուած ճրագին:

Երբ Դոօս հաղիւ գրական հրապարակը  
նետուած՝ կսկսի անոր ասոր միւր ուտել:

Երբ պատարագւոր շնորհունակի մը քովը  
եղած պահուս՝ փլպլասիին կտորը ինէ պա-  
հելու համար ըրած ջանքերը կը տեսնեմ:

Երբ տիպը պօշ կարգ մը բաթօններուն  
հիյէքը աչքիս առջեւ կունենամ:

Երբ Հանրագիտակի խմբագրատան մէջ կը  
հանդիպիմ սիրելի լարեկամիս՝ Վահան Փա-  
փաղեանի՝ որ ընկողմանած Ծօթօյին մէջ  
ապառիկներուն տետրակը աչքէ կանցնէ:

Երբ հանրածանօթ Միհրանիկ աղան թա-  
տերական նպաստէ մը քանի մը ոսկի շահե-  
լու տեղ՝ ՎեՅ զրուշ ալ գրպանէն կուտայ  
հաշիւները փակելու համար:

Երբ կնոջ մը հաւք նետած ատենը անկէ  
ստանաս «վայ գլխուդ խեղդ շուն» պա-  
տասխանը:

Երբ գրաքառ խօսելու համար օրիորդի  
մը ինքզինքը զօղլալիւ ընելը կը տեսնեմ:

Երբ խուզիք պէս աղջիկ մը ամուսնու-  
թենէն յետոյ կը յաջողի՝ ինքզինքը առիւծ

ձեւացնող ամուսինը՝ խափանը ինկած մուկի  
մը պէս խաղցնել:

Երբ հանդիպիմ անգլուհիի նմանելու հա-  
վելի դեռատի կնոջ մը՝ որ զբօսավայրի մը  
մէջ սիկառ կը ծխէ:

Երբ տեսնեմ ջուլթակը թեւին տակը ա-  
ռած դաս առնելու դացող օրիորդ մը՝ որ  
ինքզինքին առթիւքի հովեր կուտայ:

Երբ կը մտածեմ թէ թերթիս յարգելի  
անօրէնը Վահան Փափաղեան՝ ամբողջ տարի  
մ'ալ օթլախիներուն թերթ հասցուց ամու-  
նայն ճշդապահութեամբ:

Երբ այս օրերս իրարու խրդ ընելու հա-  
մար օգափոխութեան դացող ընտանեաց հայ-  
րերուն սուռաքնին կը տեսնեմ:

Երբ երկու նշանածներ միմեկ մնացած  
ատենին իրենց ապագայ երջանկութեան ու-  
հաճոյքին կանխավճարը կուտան իրարու:

Երբ աղջկան մը բերնէն շարգիներու ա-  
մենէն գուհիկները կը լսեմ:

Երբ օրիորդի մը փալալիքի տեղ չնիկ մը  
առջին ձգած ու ձեռքն ալ խարազան մը  
բռնած պտոյտներ ընելը կը պատմեն:

Երբ թատրոնին մէջ տեսնեմ օրիորդ մը  
որ փոխանակ մօրը քովը նստելու անոր ա-  
սոր օթեակները այցելութեան կ'երթայ:

Եւ երբ տեսնեմ կարգ մը զլ'ււյ'ւ'ւ'ւ'էներ  
որոնք պապուկներու պէս օրիորդի մը ետե-  
ւէն կ'իյնան:

Վերջապէս երբ կը մտածեմ թէ ընթեր-  
ցողներս այս տաքուն հնայի պէս ասոնք  
ամէնը պիտի կարդան: (Ստտեղ խալթ ըրիր,  
ծայրը ինծի կը դպի. Ծ. Լ.):

ՆԵՐՇԱՊՈՒՀ

## ԲԱՐՈՅԱԿԱՆԻ ՊԱՐՏԷՂ ՄԸ

Ստացանք Չարեհ Պէրպէրեանի տպարանէն  
նոր հրատարակուած Պարտեղ բարոյական եւ  
գործնական դաստիարակութեան անուն գիրքը:

Գիրքը պատկերներով զարդարուն, իրաւ-  
բարոյականի պարտեղ մըն է, և կարծէ որ  
հայրեր մէկ մէկ հատ առնելով իրենց հոգե-  
հատորներուն տանին:

Ար ծախուի Չարդարեան գրատունը:

## ԵՆՆԻ-ԳԱՐՈՒ

Ե Ի

ԵՆՆԻ-ԳԱՐՈՒՑԻՆ  
(ETUDE)

ԵՆՆԻ-ԳԱՐՈՒՆ ձմեռուկի միջուկի մը կը նմանի, որուն կեղեւներն են, արեւելքէն՝ Սանսքիս-պուռնի, արեւմուտքէն՝ պոսսան-իչի, հիւսիսէն՝ երկաթուղի և հարաւէն՝ ծովը Մարմարայի:

Ունի ինը փողոց, երեք հարիւր յիսուն տուն, մէկ եկեղեցի, մէկ վարժարան հանդերձ մանկապարտէզով, *raissel-aller* Թաղ. Խորհուրդ մը, խախուտ Գանձանակի Մասնախումբ մը, հինգ մասվաճառ, երկու բռամաքէճքի, վեց սրճարան, քսան զինետուն, բաղնիք մը և նաւամատոյց մը, որ *սեպար-ֆաշերն* է տեղացի մանչ-աղջիկներուն:

Մէկ կողմէն շողեւնաւին երթեւեկը, միւս կողմէն երկաթուղին *lampe-luxer*, ամէնէն աւելի ԵՆՆԻ-ԳԱՐՈՒՑԻՆ արտակարգ փայլ ու խնծիղ առթած ըլլալ կ'երևոյն, հաւատացէ՛ք այդքան եռուզեռ կայ հոս, իր մէջի մեռած որդը ողջունցաւ յանկարծ, հեռուէն դիտող մը չտես մակդիրը պիտի փակցնէ ճակատնուն:

Ֆիլոթելու երեք յարմար վայրեր ունի՝ երկաթուղիի ճամբան, պոսսան-իչին և նորակառոյց նաւամատոյցը, ուր Լանկացի և Գում-Գարուցի *սիփ-եալալը*, զիւպալ միւսիւններն ալ ի մէջ այլոց կը յօժարին ինքզինքնին ցուցադրել:

ԵՆՆԻ-ԳԱՐՈՒՑ ԳԻՆԴԻ մը մանրանկարն է, ինք իր մէջ պարփակուած, օտարի մը մուտքը անմիջապէս զգալի կ'ըլլայ, որովհետեւ հոն ամէն ոք զիրար կը ճանչնայ մէկ տուն-ուրի պէս, ու այս գիշեր ինչ կերար, գըրպանդ քանի՞ զրուշ ունիս, գործդ յաջող է, յաջող չէ, շաբաթը երկու մէճիտ կ'առնես թէ չորս, ամիսը հարիւր ոսկի կը շահիս թէ քան, կնոջդ հետ կոխ ըրիր կամ կնոջմէդ ապրտի կերար, ո՞ր աղջկան հետ կը սիրաբանես, տանդ մէջ քանի՞ հատ գորգ կամ քանի՞ հատ պնակ ունիս, կոլոշկադ քանի՞ ճիւղճիւղ ունի, ամէնքն ալ գիտեն, այնքան քեփիճսիկ են իրարու հետ:

ԵՆՆԻ-ԳԱՐՈՒՑԻ կինը փամը երկուքէն վերջ կը ճաշէ, չորսին կը պառկի, և տանին կ'արթննայ, մինչև չորս կերակուրներու պատրաստութիւն, հինգ ու կէսին ճաշ, վեցէն տան և մէկ բամբասանք ու անկէջ վերջ շունջը շիտակ նաւամատոյց կ'առնէ, ուր՝ կամ ամուսինն, կամ հօրը, կամ սպուն, կամ եղբօրը և կամ վերջապէս ... մէկու մը կ'ըսպասէ:

Իսկ էրիկ մարդը՝ վերի յիսրային նայեցէ՛ք, մինակ սարքերութիւնը որ կայ երկուքին միջև, առուօտները տաներկութեն մէկ գործի և երեկոյները տանեւմէկէն տանեւ երկուք վերահարձ, ու այնքան ընտանեւէր է որ, իր ախւստնիի *ֆէյճի* չաքմբ ընելէն առաջ անպատճառ անգամ մը տուն պիտի հանդիպի ... ձեռքի սուղրակը կամ բաքէք ձգելու համար ու անկեց վերջ սանսքիս-պուռնի:

ԵՆՆԻ-ԳԱՐՈՒՑԻ կնոջ պէս մաքրասէր կին և ոչ մէկ տեղ տեսած կամ հանդիպած եմ *parole d'honneur*, ամառ, ձմեռ, ամէն շաբաթ որ տախտակ պիտի սրբուի, չէ՛ք հաւտա՛ր, անցէք անգամ մը և պիտի տեսնէք կիներ կամ աղջիկներ, որոնք Ֆիսսանին մէջքերնին սօթթած, բոպիկ-շուշան ոտքերով մաքրելու կ'աշխատին, որոնց ի տես պահ մը քամուած կը մնաս, առանց մտքէդ փիս մտածումներ անցնելու:

ԵՆՆԻ-ԳԱՐՈՒՑԻ երիտասարդին պէս ախպալի, նա՛ իսէ անխար կ'ըլլայ, հովարսա՛ օ՛ վերջին աստիճան, խօսող, խնդացող, սակայն դիտելու է որ չախար-ֆէյճին անդին չ'անցնի, անցա՛ւ մի՛ խրո կը հանէ գիտցած ըլլաք:

Ձիյաճիք մը ուղեցէ՛ք ԵՆՆԻ-ԳԱՐՈՒՑԻ մը, ժպտադէմ պիտի պատասխանէ, առանց վարանման «Սանսքիս-պուռնու հրամեցէ՛ք կիրակի օր» — իրը թէ Սբլանիս հրաւրած ըլլար ձեզ — ու Աստուած մի արտացէ իսօքին հաւատալով երթալու մեղքը գործեցէ՛ք, վստահ եղէ՛ք թէ չպիտի կրնաք գինքը գանել հոն, բանիկ-վուր համար այնքան խօսամնապահ է խաչ ո՛ր: Կիրակի օրերը կամ ջուրերը կ'երթայ, կամ Հիւանդանոցի պարտէզը և կամ Մարջօյն ժառհէնը: Ամէն մեղքիս վրայ հիանալի պարող մը, սուառէի և արայօյի համար խինդեցող մըն է:

Եկնի-Գաբուցի կինը՝ էրիկ մարդէն աւելի մտացի և լեզուազէտ է, կ'ապշիս, կը մնաս երբ փողոցին երկայնքէն կը տեսնես զոյգ-զոյգ աղջիկներ, որոնք թե թեի գերմաներէն կամ անգլիերէն կը խօսին, նախանձելի առաւելութիւն մը երիտասարդներուն վրայ, որոնց գիտցածը ազնաւ ֆրանսերէնէն անգլին չ'անցնիր, ու եթէ երբէք այդ աղջկանց հայերէնի կարողութիւնը հասկնալ ուզէք, քննութեան հարկ չկայ, պախալ Սրաւրօն անոնցմէ լաւ հայերէն գիտէ:

Եկնի Գաբուցի երիտասարդը տիկ լուսի շատ կը սիրէ, ժառանգութիւն մը, որ պապենական է և եզական բրօնէսէս մը՝ նորա ու զօրօն խաղերուն մէջ:

Եկնի-Գաբուցի կինը «օգի չեմ խմեր» կ'ըսէ, իսկ առաջին դաւաթը խմելէն ետք, վերջին դաւաթին հաշիւը կը կորսնցնէ ալ, այնքան ճիւղն է իրաւոր:

Եկնի-Գաբուցի երիտասարդը լաւ միւզի-փիւն մըն է, կամ ուս կը սովոր կամ ֆանոն և երեք ամիս վերջ պըխաթ կ'ըլլայ. ֆոնսերներու երբէք չ'երթար, իննէ սազէն ախորժ կ'զգայ. թատրոնի ջերմ սիրահար է. Մնակ-հանին հանդիպած իրիկունը, իութի սարտէլասի բանալ կ'ուսայ իբր մէջէ՝ ուրախութենէն:

Եկնի-Գաբուցի կինը ազուր սեմայի, մանի, և կազէլ կը կարդայ որուն համար ամէն տուն դաշնակ կայ և կամ աֆօրօն, շարգի մը երէցէք, անմիջապէս դաշնակի վրայ կ'ընդօրինակէ, իսկ տուէք ձեռքը ուժեղ կամ la prière d'une vierge, երեք ամիս երիւս կ'ընէ ու դարձեալ անսխալ չը կրնար գտնել. սուառէի համար հոգին կուտայ, ըսէք իրեն «թաղիդ մէջ այս ինչ տունը հարսնիք կայ» մինչև լոյս քունը կը ծախէ և այդ տանը պատուհաններուն երկաթ ձողերէն կախուած փիս փիս սէյիւր կ'ընէ:

Եկնի-Գաբուցի երիտասարդը առեւտրական և գիտական յօգուածներէն համ կ'առնէ և օրուան նիւթերով կը հետաքրքրուի ու ամէն գրողի հանգէպ մասնաւոր համակրանք մը կը տածէ:

Եկնի-Գաբուցի կինը սիրային վէպեր շատ կը կարդայ, և գրագէտներուն մէջէն ամէնէն շատ կը սիրէ մեր անդուգական գաւեշ-

տագիրը Լիլլան՝ և սիրային ոտանաւորներ գրողերը:

Եկնի-Գաբուցին՝ — այր, կին առհասարակ — իրմէ մեծը այնքան կը յարգէ ու կը սիրէ, որ տարիքոտ մէկը տեսածին պէս «հայրիկ» ըսելով ձեռքը կը համբուրէ, բարեմասնութիւն մը որ շատ քիչերու քով կը գտնուի:

Եկնի-Գաբուցի երիտասարդը՝ ամառ գիշերները բրօնզէս կ'ընէ, նախ կերածը մարսելու և երկրորդ՝ քննական բովէ մ'անցնելու գեղեցկագիտական ալպովն թերթերը, որով կրնայ նկատուիլ ապագայ խոստացող սիրահար մը:

Իսկ կինը՝ կը պտափ լսկ իրեն կեանքի ընկեր մ'ընտրելու, որուն համար Եկնի-Գաբուցի կինը կրնայ ըլլալ գուրգուրաւ մայր, խաթունիկ կին ու պատուական քոյր, իսկ սիրունի... երբէք: Փողոցէ մը անցած առանձնիդ զլիսով բարեւ տուէ՛ք՝ կարմրելով կ'առնեն բարեւնիդ, այնքան ամօթխած են խուփկները. իսկ թէ ըսէք — կը հաճի՞ք օրիորդ այս գիշեր Օտէնի պարահանգէսին համար ընկերանալ ինձ, աներկբայ եղիք շատ բարեացակամ է չը մերժելու ձեզ:

Եկնի-Գաբուցի երիտասարդը կը փափաքի, որ իր քոյրիկը դիրքով իրմէն բարձր մէկու մը կնութեան տայ, իսկ եթէ ինք առանձնապէս ելլէ՝ հինգ հարիւր ոսկինոց աղջիկ մը առնել կ'երազէ ու հարիւր ոսկիէն քսան ոսկի դրամօժիտ առնելու խայիլ կ'ըլլայ. արտաքոյ կարգի ճախանի ալ է, մատը անցուցած տասը դանեկաննոց սրգա մատնին տասը ոսկինոցի տեղ կ'ընցնէ կուզէ ու խրախուսքիւն մըն ալ ունի որ քուկին փարայովդ քեզի ճախա և ուրիշներուն ալ հովարսայութիւն կ'ընէ, ամօթ չ'է ես՝ նըկարագրի խնդիր:

Եկնի-Գաբուցի երիտասարդը երբեմն բանաստեղծէնմիջ կ'ըլլայ... վարունգի և մառուն կանաչութիւնը տեսնելով:

Եւ որպէս զի իմ ազնիւ բարեկամներս ու բարեկամուհիներս չը վերաւորուին այս անմեղ կատակներէն, կը փութամ յայտարարել թէ՛ իրենք բացառութիւններ են ու մէկը պէտք չ'է որ սամուռ փութ չ'են ցօղուածս:

Մ Ե Լ Ե Լ

## ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ՇԱՊԻԿՆԵՐԸ

Երեւակայեցէք մուկի խաբան մը, որուն մէջ իւզոտ ապուխտի չերտ մը կախուած կայ, և անոր տիրանալու համար մուկեր ու առնետներ անորժակնին սրած ներս կը խոյանան, իրենց համար այդ գանձը կույ տալու և պարտկելու համար, և անգամ մը որ սուր ակռաներնին դպցնեն ապուխտի չերտին, կարթը շարժի... մնացեալը գիտէք արդէն:

Այսպէս չեն արգիւտք օրուան ամուսնութիւնները, համայն... ինչ ըսիք:

Խաբանը տունն է, մէջի ապուխտի չերտը (նմանցնել չըլլայ) օրուան աղջիկները, հարկաւոր ոսկիներ գողերնին, և դուրսէն ներս նայելով չողիք վազցնողներն ալ օրուան միւսիւնները: Անոնք աղջիկէն աւելի՝ դրամի սիրոյն կը մօտենան, և անգամ մը որ ձեռք ձգեն քսակնին պարարտեցնող դուրսը, ահա չա՛թ դուռը ետեւնին կը գոցուի ու միտ մինակ կը մնան՝ պատրանքին հետ գիրկընդխառն:

Ապուխտին չերտը (նորէն նմանցնել չըլլայ, հեռու լսողաց) աղջիկը ըսել կուզեմ, իր թաքուն անուշութիւնները կեր տալէ վերջ, խեղճ ճառթը մուկը՝ փեսան, ի դուր կը չրջի հոս հոն, դուրս նետուելու ազատուելու համար այդ լուծէն և սակայն անկարելի:

Ահա օրուան ամուսնութիւնները մէկ բառով ազնիւ ընթերցողք, ահա ամուսնական կեանքը իր իսկութեան մէջ, չնորհիւ դրամօթիտին, որուն սիրոյն շատ երիտասարդներ այսօր խեղճ ու կրակ դիրք մը ունին. անոնց համար կ'ըսեմ որոնք ամուսնացած են ոչ թէ կեանքի ընկեր մը առնելով տուն տեղ կազմելու մօտք, ա՛յլ, լոկ մէկ քանի հարիւր ոսկի ձեռք անցնելով ուրուն չուրուն վատնելու ու կամ իրենց ամուրի կեանքէն մնացած բացը գոցելու համար, առանց մտածելու թէ՛ իրենց ետին անդալալար ահագին խորխորատ մը կը բանան այդ կերպով:

Բայց մենք ոչ վեղար ունինք ոչ փիւռն, որպէսզի կայնինք Հանրագիրակի բեմէն քա-

րող խօսինք, ուստի նիւթը քրքրենք, պարզենք ու անոր դաւեշտական կողմերը պատկերացնելով. է՛հ... ով գիտէ կարելի է օգտակար կըլլանք մեր եղբայրներուն և քոյրերուն (միմիայն բողոքական չի հասկցուի):

\* \* \*

Հօրը ժառանգ ձգած երեք հարիւր ոսկին ամէն օր բաղնիքին թասին մէջ սապոն ջուրերով լուացող Օր. Ուստիկ Կաղնիփայտեան իր երեսուն գարունները ողջունելէ վերջ: Եռեսուն և մէկերորդ սօն պահաւիրն, վերջապէս ճատալող տաներեցին չնորհիւ կ'ամուսնանայ այն երիտասարդին հետ, որ եթէ ամիս մ'ալ պոնտները փոխեր հրապարակին վրայ՝ անանկ պիտի հեշակուեր:

A propos! քիչ շատ աչքը իքվին տեղը կին մը, տուն փեսայութիւն, և որ աւելին է՝ երեք հարիւր ալ ոսկի:

Միւսիւ Գարեգին Զըխրմեան օր մալ նախա կամուսնանայ, բայց... պայմանաւ որ՝ դրամները աղջկան անունին պանքան ձրգուի և մինչեւ որ տիկինը իր հաւանակութիւնը չիտայ (ներեցէք հաւանութիւն պիտի ըլլար այս բառը) միւսիւ Զըխրմեան իրաւունք չունենայ ո՛ր և է դրամ քաշելու անտուկէն:

Աղէ՛կ մի... աղէ՛կ...

Հարսնիք, կերուխում, հահա, հիհի, առագաստի գիշեր, բլաքօն, սքօթա, չիմա, ելքէն, քիւրէկ ըսելիքէն, ճիճի մամայի օրերը կ'անցնին այսպէս:

Միւսիւ Զըխրմեան, յանուն իր դրամօթիտին, հրապարակէն քաշած դրամները ջուրը կը քաշեն, մտմտուքը՝ մարմուքի կը փոխուի, խանութին մէջ յաճախորդէ աւելի առնելիքները, մեղուի փեթակի պէս կը մտնեն կելլան ու դեռ մեր միւսիւն մանկրո մը չէ՛քաշած իր իրաւունքը եղող գումարէն:

\* \* \*

ԱՌԱՋԻՆ ՇԱՊԻԿ

Գիշեր մը լուսնի լուսով միւսիւ Զըխըմ-  
եան, տալլը պատմա գիշերնոցը հագած, սի-  
կառ ի բերան, ննջասնեկին բաց պատուհա-  
նին առջեւ նստած կը խոկայ:

— Գուզում Գարեգին, քանի օրէ վրադ  
հով մը կայ չեմ հասկնար կոր, մտմտութեամբ մը  
բան մը տեսիս, կը հարցնէ տիկինը, պառ-  
տէլի շապիթին մէջէն բիրէ քթուելով:

— Չէ խուշըս, ինչ մտմտութի ... քենէ  
զատ ինչ մտմտութեամբ ունիմ, եկուր սքնկ նըս-  
տէ նայիմ ...

— Հա՛ ... չէնէ մի աս օր չարչին բառ-  
լախ բան մը անսար տէ գիշերդ չէլմիշ ը-  
րաւ ... հէ՛ ... հէլէ հէլէ՛ ...

— Քեօնայ աշկս ... քու վրադ ուրի-  
շին նայիլ ... Աստուած չընէ ... քիչ մը  
տկար եմ տէ ...

— Վո՛ւշ չորնամ հոգիս, Աստուած վրա-  
յէդ առնէ տէ ինծի ապա ադ գէշութիւնըդ ...  
սանկ երեսս նայէ նայիմ ...

— Եկուր հոգիս, եկուր անուշիկ կընիկս,  
սանկ դէմս նստէ տէ կէօրիւշմիւշ ըլլանք,  
քեզի հետ երկու չիֆթ լախըսը ընեմ նէ  
հէմ յոգնութիւնս կառնեմ՝ հէմ ալ գիտես քի  
կը բացուիմ ...

— Սա պըլըններդ վեր վեր ըրէ նայիմ...

— Անանկ կուզես նէ անանկ թող ըլ-  
լայ ... նա՛ ըսելով երկու ձեռքերովը պե-  
խերը կողորէ վեր վեր:

— Հա՛ ... ասլան էրիկս, ասլա՛ն, աչք  
ունեցողին աչքը ելլայ, մինակ իմինս ես ա-  
նանկ չէ՛ Գարեգինս ...

— Հապա որինը պիտի ըլլամ խուշըս...

— Չէ ամա գիտես եա՛, խըսիւնճ եմ  
իշտէ, ծառքս չէ, ինծի անանկ կուգայ կոր  
քի քեզի ծառքէս պիտի առնեն տէյի ...

— Աստուած չընէ, ան չէ ամա՛, սա-  
հաթը քանին եկաւ, տալմիշ եղանք տէ  
քունս եկաւ ...

— Էհ կայնէ մոմը մարեմ տէ խանտիւը  
վառեմ, ըսելով երկուքը մէկ կը նետուին  
մորփէոսի գիրկը:

ԵՐԿՐՈՐԴ ՇԱՊԻԿ

— Հայտէ ճանըմ Դարեգին, պառկէ ալ-  
թըխ ... ո՛ւֆ ...

— Դուն պառկէ ճանըմ, ես քիչ մը նըս-  
տիմ պիտի ...

— Ա՛տ ինչ է, նոր մօտա՛ ելաւ այս գի-  
շեր, գիտես քի քեզսիդ չեմ ըլլար ...

— Հա՛ ամա հոգիս, ձգէ քիչ մը մտմտե-  
տութեամբ, սրային ձգեմ տէ ...

— Ինչ մտմտութեամբ է, ինծի ալ ըսէ, մէկ  
տեղդ կը ցաւի կոր ...

— Չէ, հիչ մէկ տեղս էօգիւր մը չունիմ...

— Հապա ինչ է, գործիդ մէջը խը՛ռս  
մը ելար ...

— Չէ՛ ... պառկէ ճանըմ ...

— Էյ ֆէսֆէսէ կընեմ կոր ... աճապ  
մէկը փարա՛դ կերաւ ...

— Փարայի տայիր է ամա, ուսող մու-  
տող չեղաւ ...

— Էյ հապա ինչ է, կընիկդ եմ նէ պէտք  
է քի ըսես ...

— Ժանըմ ըսեմ նէ ինչ պիտի ըլլայ չը-  
սեմ նէ ինչ պիտի ըլլայ ...

— Տահա մէռաք կընեմ կոր, չափուի  
ըսէ Դարեգին, վիյան տուիր ինչ տուիր,  
ծունը գլխուս ...

— Չէ՛ ըսի՛նք ... ամա՛ ...

— Էյ ամա ինչ, դող կեկամ կոր ...

— Հի՛չ, ինչ պիտի ըլլայ, վաղուան օրը  
հարուր օսկիի պէտք կայ մութլախ... պէտք  
է քի ծառքս գտնուի ...

— Ատ է նէ բան մը ըսել չէ՛ ... ես ալ  
գիտցայ քի ֆէսֆէսէյի գործ մըն է ...

— Ախ հոգիս, գիտեմ քի դուն չար խա-  
բան հրեշտակ մըն ես ...

— Հոգդ պիլէ մընէր, սիրտդ ֆէռահ  
բռնէ, հայտէ պառկէ, Աստուած ողորմած  
է ...

— Ախ... Ուստիկ եանի խելք մը, ճար  
մը ընելու ըլլաս նէ, տիրէկ պիտի տնկես...

— Արեւդ սիրեմ, ես քեզի ճար մը խելք  
մը չի սովըցնեմ տէ որի՛ պիտի ըսեմ ...  
հիմա վաղը առտու կանուխ կեկաս խանու-  
թըդ կը բանաս, բանալէդ ետքը, որի քի  
նազըդ կանոնի նէ՛ անկէ պէտք եղածին խը-  
տար սէնէթով մը փոխ կառնես, կը վաստը-  
կիս կուտաս, էօտէմիշ կընես ...

— . . . . .

— Տեսար կընիկդ, կէնէ կընիկդ կէնէ  
Ուստիկդ ... զաթը Աստուած ինծի քու

դէմդ հանեց քի նեղ օրերուդ բանդէհիբի պէս տէրաբիդ տէրման ըլլամ տէյի ...

Միւսիւ Զըխըմուան, իմացած այս անսահման խրատականէն փութ կտրած, բարեկութենէն կսկսի երեսուն և վեց ականան իրար զարնել:

— Նայէ, կը շարունակէ Ուստիկ, դուն ալ մաթ եղա՞ր եւ ցուցուցած եօլէս, իշտէ սիրտդ ըռահաթցուր տէ ելիր տեղդ պառկէ, նայէ աս օր բիւթիւն թախտապիթիները ըստըկեր եմ քի ըռահաթ մշիկ մշիկ Ֆշտաս տէյի ...

— Հայտէ քէօն չէթման, տէֆ օլ դէրէ պաշըմ եանրեօր ըսելով՝ միւսիւ Գարեգինն անկողին կը մտնայ ու դէմքը արեւմուտք դարցնելով կսկսի անիծել այն օրը որ՝ չէր յաջողած սա մահուս 300 ոսկիները իր անունին դարձնել:

#### ԵՐՐՈՐԴ ԵՄՊԻԿ

Կիրակի ցերեկ մըն է, Ուստիկ, Գարեգինն և զոքանջը Մարեհնէ, նստած են վարի բաւկը և տաքօրէն կը վիճին,

— Եաղմա չիդայ, ան տալու ըլլայ նէ՛ ես խառախուշի պէս թէրէյին վրայ եմ ... պարտք ունիք նէ վաստըկեցէք տէ էօտէմիշ ըրէք, ան փարային ծառք դպցնել չըլլար ... կըսէ ճատալող զոքանջը փեսին երեսին:

— Աղէկ ես, անէքի աս միտքը ունէիք նէ ինչ տէյի ետեւէս ինկաք գլուս կապեցիք, իս ալ բխացային վրայ ըոէզիլ ըրիք, ինչ էօճ ունէիք ինծի քի աս բանը ըրիք, կըսէ Գարեգինն տեղէն հորու հորու ցատկելով:

— Դո՛ւն ետեւնուս ինկար չէնէ մի մննք, քիչ մը քիչ քիւմէսին էթուաֆը սամսարի պէս դառցար գիշերները քի մէյ մը Ուստիկին երեսը տեսնաս տէյի, հիմա ասանկ եղաւ ...

— Խունտուռանին չըրախը պիլէ կը կարգուի կոր նէ ծոցը փարա կը դնեն կոր աւուճ ավուճ, սրան ինծի եկաւ նէ հալուճ պիլէ խամէթ չեղաւ, մեղքը չէր ինծի պէս տէլիխանլըին ...

— Էյ բէք աղէկ ... դործդ աւրուի էր նէ ինչ տէյի ելար կարգուեցար ... կըսէ ծուռ բերան զոքանջը ...

— Կարգուեցայ քի հէլպէթ դրախտմա մը առնեմ տէ պոչս չափեմ տէյի ...

— Անէքի պոչդ ծուռ է՞ր նէ, թող աւաջ շտկէիր տէ ետքէն կարգուէի, քի չիմա ալ աս խոեքը չելլար ... քոնի որ քի ես ողջ եմ նէ ան բանքօթօմանին օսկիներուն դպլիլ չըլլար ... սախընհա քա Ուստիկ, ժամուն դուռը կը մուրտս ետքը, ըսեմ տէ ...

— Էյ սօղոս, նասըլ պիտի ըլլայ սո չիսապը, կըսէ Գարեգինն ինքզինքմէն ելած ...

— Նասըլ պիտի ըլլայ ... ան երեք հարուր օսկին ծնելիք մախսըմինն է, նայէ տար կէնէ էօ պօռալէն աչքերը դուրս ինկաւ աղջկանս, վաղը մէկալնոր անդաւ ըսէ մէյստան ելլայ նէ ան վախիթը կը հասկընաս փառային խըյմէթը ...

— Սն չէ ամա Մարեհնէ տուտու ես հոս վարպետ տուտո՛ւ եկայ չէնէ մի տուն փեսայ ... ամա ետքէն կը ձգեմ կերթամ գիտես ...

— Տահա նէլէր ... ամօթ է Գարեգինն, խօսք կառնէ Ուստիկ, գիտես ինչ կըսես կոր նէ ...

— Կուզէք նէ տահա սունթուղուն ըսեմ ... պըռագըր կիտէրիմ ...

— Վո՛ւյ ... աման սանճիս ... աման փորս ըսելով Ուստիկ կը փռուի կը մնայ, մինչ Գարեգինն սրունգներուն բանթալօն մը քաշելով դուրս ելալ՝ տունէն մեկնել կուզէ ...

— Սուսը հալը նայէ ճանալար ...

— Երկու աչկդ քէօնայ Գարեգինն ... ճղակըտար ելլաս քի զաւակիդ երեսը չի տեսած կը ձգես կերթաս կոր ...

— Իշտէ ես կերթամ, դուք երեք հարուր օսկինիդ առէք տէ նատեցէք, կողոշկայ ըրէք, պէլքի ճիվճիվ կը հանէք, բսիլով դուռը կը գոցէ դուրս կելլայ, մինչ սոսկին մայր ու աղջիկ մուռելի տուն կը դառցնեն, ու կսկսին լալ ծեծկուիլ:

#### ԶՈՐՐՈՐԻ ԵՄՊԻԿ

Իրիկունը միւսիւ Զըխըմուան չի գար: Գիշերը կը ծանրանայ, մութը կը կոխէ: Մայր և աղջիկ կուկուկներու պէս անսկիւն անկիւնը կծկուած ճաթօ ընկու պէս դուրս կը նային, սպասելով որ միւսին գայ:

— Սահաթը երկուքը գնաց, ալթըի չի դար, կըսէ մայրը աղջկանը աչքին մէջ հալքելով ...

— Դո՛ւն եղար սէպէպը իշտէ, տղան քիմ

պիլիք ինքզինքին խառտ քրաւ ինչ բրաւ, զէրէ նամուսին համար հոգի կուտար. ետնի անոնկ բան մը ըլլալու ըլլա՞յ նէ ես ալ հետը պարապար փոսը կը նետուիմ հիշ ուրիշ բան չէ ...

— Զէվզէ՛կ ... խելքդ կը խփէ բեր հաւի՛ կոյս, դուն ալ գիտես քի քեզ կը սիրէր տէյի հա՛, չաչխըն, փարապիդ է քա փարապիդ, նայէ չի տուինք նէ սիւլիւկի պէս սիւլիւմիւն իշխաւ ...

— Ամա մեր ըրածն ալ հախսըղութիւն է տուտու, առաջ խօսեցանք քի երեք հարուր օսկի դրախտում կուտանք տէյի, պսակուելունու պէս հաւան փոխեցինք ...

— Ես չեմ խառնուիր, կուզես նէ վաղը ինչիւր, թախըմով առ ծառքը տուր, ետքէն խեղճ ըլլաք նէ պախըռ մանդալ մը պիլէ չունիմ քի ծախեմ տէ հաղի փարա ընէք ...

— Քանի կը մուլթնայ տէ քովս չեմ գլտնար կոր նէ՛ վրաս կէշութիւն կուգայ կոր, զաթը ես վաղը պիտի երթամ պանքայէն փարայները առնեմ տանիմ թէսլիմ պիտի ընեմ, չօծօխ չէ՛ ես, թող խուլլանմիշ ըլլայ ...

— Ձեմ խառնուիր ըսի, ինչ կուզէք նէ ան ըրէք, կըսէ ե կերթայ կերակուրը տաքցընելու, սրպէս զի ուտեն:

— Ես աս գիշեր օտաւ մինակ եմ, կը վախնամ տուտու, ելլայ գլոխս խաղայի մը գա՞յ նէ ...

— Քու գլոխդ գալիք խաղան աս գիշեր չէ, վաղը, փարաները տուած ատենդ պիտի գայ աղջիկս, աս գիշեր բէք կը վախնաս կոր նէ՛ ճալման օտադ առ, կէնէ նէֆէս մը՝ ծան մըն է ...

Ու այսպէս կորոշեն, հետեւեալ օրը 300 ոսկին միւսիւ Զըխըմեանին յանձնել:

### ՀԻՆԳԵՐՈՐԿ ԵԱՊԻԿ

— Քա չունիմ ըսի հոգիս, ո՛ւր տեղէն պիտի տամ ... երկու հալխա մատնի ունէի ան ալ տուի, անոնք ալ գացին, տահա՛, կըսէ Ուստիկ, արցունքոտ աչքերով ...

— Կընի՛կ, խանութս չպիտի կրնամ բանալ աս օր, բիւթիւն պիտի գան ըռէզալէթ պիտի հանէն ...

— Պէ եսվրո՞ւմ, հինգ ամիսին մէջը աս երեք հարուր ոսկին նասըլ տակէն մտար վրայէն ելար, Աստուծմէ չի գտնաս հէմէն ...

— Պէ ճանըմ քէֆիս չի խարճեցի՞ ես, պարաքի տուի ...

— Էյ աղէկ ես, դուն ինծի կընի՛կ տէյի առիւր չէնէ մի պարտքի թախտապէղի ... աս ըսէ ինծի, անէքի պարաքը պողազդ էր նէ ինչ տէյի ելար կարգուեցար ...

— Իշտէ դրախտում առնեմ տէ օսթալըխի պարաքերս թէմուզցունեմ տէյի ամա դէշ եղաւ ...

— Ձի խախելով ալ կ'ըտես կոր հէ՛, կըսէ ճատաղող մայրը, սանդուխին վրայէն, որ կը լսէր այր ե կնոջ խօսակցութիւնը, սէնի ճաւաղար եէլ հուտան սէնի, քա կիւզէլիմ ոսկիները քա՛ ... ոխ ըլլայ, օ՛խ օ՛խ օ՛խ ... շան ձգնած, քեզի ըսի քի ծառքը մի տար տէյի, ամա ճիճի մամա, թաղէ տէլիւսնիւր է տէյի չը գիմացար վազեցիր թէսլիմ ըրիր քի, ասանկ գայ տէմդ ասնի նստի տէյի ...

— Կերայ նէ կընկանս փարան իմ հախըս կերայ, քեզի՛ ինչ կըլլայ կոր, կըսէ փեսան պատուաւ գիշերնոցը կոնակը ...

— Ըն զիֆթ ուտէիք տէ կանանչ փախէիք հէմէն, նա վաղը կընիկդ ծան կուտայ, նայիմ ինչ խալթ պիտի ուտես ...

— Աստուած տուաւ, հէլպէթ ան կը նայի, դուք հիմա այս օրուան ճարը տեսէք վաւրօռի փարա պիլէ չունիմ ...

— Մօ՛ ճանալար, մանչ գաւաղ չունեցայ քի տէրտ չի քաշեմ տէյի, ինչ մեղք գործեցի աճապ քի Աստուած քեզի դէմ հանեց, հէ՛ ... հուժուժախ ուռապիլը, հէմ կընիկդ օսթան ձգեցիր, հէմ սէրմիյէն կերար, հէմ բիճ մը բէյաահ ըրիր, դուն ալ սախսօնեայի պէս օսթան մնացիր ...

— Բան մը քի եղաւ ճանըմ, դուն կէնէ մնտուկներուդ տիպը նայէ, պէլքի ողորմած հոգիէն մնացած բաներ մը կրնաս գտնար ...

— Բան մըն ալ չունիմ, զլիւուդ ճարը տես Զըխըմեան ես ինչ խարախատա ես ...

— Էյ ... ետքը ...

— Ձիգայ կըսեմ կոր իշտէ, հայտէ նայիմ, չելլա՞ս երթաս ... երեք հարուր ոսկիներուն վախտը գլոխդ առիւր գացիր, չերթա՞ս, հիմա ալ նորէն անանկ չընես ... հէ՛ ... ծառքէդ ո՛վ բռներ է ...

— Ո՛ւր երթամ, ո՛րի երթամ ...

— Ճէհէլլէմին պուճախը գնայ ...

— Ամա կերթամ ...

— Երդում ըրէ քի հաւատամ քի կերթաս կոր տէյի ...

— Վայ ... առ խըտար հա ... էյ կընիկս ...

— Առջ դուն տիլիմ մը հայ գտիր տէ կտքէն կընիկդ ուղէ ...

#### ՎԵՅԵՐՈՐԴ ՇԱՊԻԿ

Հարուստ տան մը պատուհաններուն առջեւ երիտասարդ մը բոպիկ ոտքով ապակիները կը սրէ :

— Ծո՛ Գարեգին աղուոր թէմուզուր, չփէ՛, չփէ՛ ...

— Կընեմ կոր տիկին, աֆ կընէք, ալը՛՛՛ միշ եղած չեմ տէ ...

— Կընիկդ ձգե՛ր ես ծո՛ ...

— Ես ինչ յանցանք ունէի, անոնք ինծի դուրս ըրին ...

— Էյ հիմա անոնք ո՛վ կը նայի կոր ...

— Եալմա կը բանին կոր եղէր ...

— Էյ ծո՛ Գարեգին, դուն իմացածիս նայելով երեք հարուր ոսկի դրախտմա առեր ես, ի՞նչ ըրիր ծո՛ առ փարայները ... հէ՛ ... կըսէ տիկինը :

— Սուս եղիր տիկին, գոցէ, իշտէ մեզի պէս տիպը պօշ մարդիք դրախտմային սիրուն, ծառքերնիս փարայ ասնի տէյի ելանք կարգուեցանք, սէրմայէնիս գնաց, դրախտմանիս գնաց, կընիկնիս ալ ծառքերնուս գնաց, մէնք ալ իշտէ ասանկ խղմէթքեար եղանք ...

— Սէրսէ՛մ ... տէ՛ ... լախըռարի սալ-միշ մըլլար տէ աղուոր չփէ ... :

\* \* \*

Առանց դրամագլուխի լոկ դրամօթիտ մը ձեռք ձգելու համար ամուսնացող երիտասարդներուն և անանկներուն ալ աղջիկ տուող ծնողաց՝ ասկէ աւելի ցայտուն խրատական մը չէինք կրնար տալ կարծեմ :

#### ԼԻԼԱ

 Տե՛ս Փալագաշեան Աղջկանց Բարձրագոյն՝ արժարանի ազդը՝ կողքին վրայ :

#### ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ ՍՅԱԹՍՅԱԹ

— Դիտուած է որ, միջին հաւելով, ոսկերիչ մը, օրը վեց անգամ կը հաւե, եւ քե երբ հաւեի համար օրը 46.878 անգամ կըրգակը կերեցնէ, ապրանք ծախած ժամանակն ալ աւելի՝ այսինքն 76.448 անգամ :

— Հայ օրիորդ մը, խելքը հասնելէն մինչեւ ամուսնացած օրը, հաւել եղած է որ 1780 կամիք կուսէ մօրէն զաս ուրիշներէ, 540 սիրային նամակ կ'ընդունի, 890 անգամ՝ «եեզ կը սիրեմ հեմ ալ պիտի առնեմ» կը լսէ եւ ասոնց փոխան Մէ՛կ անգամ կը կարգուի :

— Բարեկեցիկ սիկին մը ամուսնացած օրէն մինչեւ խաբարմա կապած օրը ամբողջ իր ըրած Ֆանթեզի ծախսերուն գումարը կը հասնի՝ 2650 ոսկիի :

— Նշանած միւսիւ մը, ամեն կիրակի իր այցելութիւններու միջոցէն մինչեւ ամուսնութեան օրը, հազիւ 38 պաշիկ կ'ընայ զետեղել իր ապագայ կնոջ երեսին վրայ :

— Երիտասարդ մը, միջին հաւելով, մինչեւ կարգուած օրը, անոր ասոր 1800 նամակ կը գրէ որոնց 790ը սիրային կ'ըլլան քնդհանրապէս : (Բերացիները աւելի պակաս, քանի որ նամակի տեղ անոնք աւելի՛ ունեցելու կուսան) :

— Միջին հաւելով Հելլենուհին 8 ժամ կը քնանայ, Ֆրանսուհին 7 ժամ, Իսպուհին 6 ժամ, իսկ հայուհին 10½ ժամ : (Եւ ասոր համար է որ Հայ աղջիկները միշտ գէր կ'ըլլան) :

— Ամառ օրերուն Շիրէքը խայրիէի շոգեմանները մեծող ելլող կիներուն մէջ հարիւրին տասնին բեւիկն վրայ կոխուելով կը պատռեն :

— Ջերմեռանդ (.) կիներուն հարիւրին 80ը հագուստի գլխարկի ձեւ որոշելու համար եկեղեցի կ'երթան :

— Քուներնուն մէջ ամենէն շատ երազ տեսնող օրիորդները անոնք են որոնք դրամօթիս մը ունին տրամադրելի՝ փեսին նուէր քնելու համար :

ԼՍՍ.ԴԱՆ

ՓԵՍԻՆ ՔԵՆԸ

[ՖԱՆԹԵԶԻ]

Կիկոնց Մրօն՝ խոհեփնիս վանցի,  
Սիրուն անուշիկ, բայց հարեւանցի,  
Համով վեպիկներ կը պասմէր լանախ,  
Երբոր հայրիկէն կուսէինք ծեծ, չախ,  
Ունկնդրելն երբ ժամանց, հանոյք մ'է  
Սիրով կը պասմեմ ալուոր մ'անոնցմէ:  
Գաւառներու մէջ, շատ հին սովորոյթ,  
Տղաք պզտիկ կարգելու կայ փոյթ,  
Այսպէս գիւղին մէջ վարպետ Մրօնին  
Հարսնիք մը կ'ընեն, հարսնիք չէ՝ օյին.  
Հարսնուկը հագիւ կայ հրնգետասան,  
Անոր չափ մըն ալ մեր խրէզ փեսան:  
Չերկարենք, որ մը ալաւ նոր փեսան  
Կ'ըսէ հարսուկին. — «Էրուդ իմ դուրսան,  
— Փիշաւ մի եփիր, ուսեմ իրկրան».  
Քիչ ետք գայն կ'եփէ Նազլուն դիւրահան,  
Բայց տես սասանան, նոյն օր *հնումն լան*  
Հիւր կուգայ, պէտք է հանել կերակուր,  
Փիշան եր պատրաստ, զորս մէկ ումպով կուլ  
Կուտայ սաւերու՝ որդին այն հովկուլ:  
Իրիկունն տղան կը դառնայ արեւն,  
Նօրի եւ յոգնած ըլլալով արդեն  
Մեծ Պրզտիկ բոլոր կը նքստին սեղան,  
Փիշաւին ի գուր կըստասէ տղան,  
Ճարհաս կը գոչէ — «*փիշաւը Նագլո՛ւ*».  
Բայց Նագլուն ձայնով մեղիմ, աղետաւորով  
Կ'ըսէ. — «*Էմնուն լան անուշ ե արեւ*».  
— «*Անն՛ւշ ե արեւ, դեհ չունի զարեւ*».  
Եւ ասոր վրայ տղան անքրտունջ  
Կը փառուի մէկ կողմ լրոյիկ ձեռքն ի *պոնջ*.  
Կես գիշեր կ'ըլլայ, պառկելու պահն եր  
Ամեն մարդ կ'երթայ, կը մարեն ջահեր.  
Նագլուն ալ կ'երթայ բունիկն իր սիրոյն  
Ըստաստելով հոն իր տէր ամուսնոյն  
Միջոցեւ ան՝ վարը դեռ կը պահէր ինքն.  
Հանին կուգայ վար. կը բռնէ ձեռքն,  
Եւ անուշութեամբ կ'ըսէ ականջին,  
— «*Դե՛հ, շուտ արե՛մ մանջ, ինչ կանջի ախճիկ*  
= *Հենիկ փիշաւը օրու օր կ'երցուց*,  
Էնիկ քող պառկի հարսանեկան խուց:

Գ.Ս.Հ.Գ.Ս.Հ.Ս.

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՊԱՐՏԻԶԱԿ

Վարժարանիս նպատակն է իր ուսանողներուն տալ  
գործնական կեանքի պահանջներուն համապատաս-  
խանող հիմնական և առողջ դաստիարակութիւն մը:  
Բնիկ և Ամերիկացի ուսուցչական խմբին վրայ աւել-  
ցած է, Զուիցերացի ձեռնհաս ուսուցիչ մը՝ մասնաւոր  
դժ տալու համար նաեւ Ֆրանսերէն լեզուին:

Աշակերտները կը վայելեն բժշկական և ընտանե-  
կան կատարեալ խնամք վարժարանին մասնաւոր բը-  
ժիշկին, գիշերօթիկ հինգ ուսուցիչներու անմխտակ  
հսկողութեան և Տիկին Չեմպերի մայրական խնամք-  
ներուն տակ:

Վարժարանին յառաջիկայ տարեշրջանը կ'սկսի Սեպտեմ-  
բեր (Ն. Տ.) 7-ը, Գիշերօթիկներուն տարեթուական է 16  
ժամ. Ոսկի, որուն կէսը վճարելի է Սեպտ. ին սկիզբը,  
իսկ քնացեալը՝ Յունվարի մէջ: Գործիական երաժշ-  
տութեան դասին համար կը պահանջուի տարեկան  
մէկ ու կէս ժամ: Ոսկի:

Թէ՛ հին և թէ՛ նոր աշակերտներ, եթէ կ'ուզեն  
Հայտարարաւորելն կէս դնով ճամբորդել, պէտք է դի-  
մեն Գրեգոր Էֆ. Շահպաղեանի և իրենց անունները  
արձանագրել տան մինչեւ Օգոստ. 17:

Աւելի տեղեկութեանց համար դիմել Մը. Բիթի  
կամ Վարժարանիս Պոլսոյ գործակաւար Գը. Էֆ.  
Շահպաղեանի, Պոլսոյ-Հասու, 4. Պոլիս, և կամ Տնօ-  
րէնութեան, Պարտիզակ, 10—7

ՀԱՅՈՒՇԵԱՑ ՎԱՐԺԱՐԱՆ

ԱՏԱՐԱԶԱՐ

Հայուհեաց Վարժարանին նպատակն է Հայ տղջիկ-  
ներուն տալ լուրջ դաստիարակութիւն մը՝ զարգա-  
ցած և բարեկիրթ տանտիկիներ և դաստիարակու-  
թեան գործին օժանդակներ պատրաստելու համար:  
Վարժարանին տեսչութիւնը աշակերտուհիներուն ֆի-  
զիկական, իմացական և բարոյական զարգացումը միշտ  
խզճամբա հոգածութեան աւարկայ կ'ընէ: Բնիկ և  
Ամերիկացի 12 ուսուցիչներէ կազմուած ձեռնհաս  
ուսուցչական խումբ մը կ'աւանդէ Հայ, Անգլ. Թուրք.  
և Ֆրանս. լեզուները. ինչպէս նաեւ ընական, իմաստա-  
սիրական, չափական և այլ գիտութիւններ: Միայնուն  
կարուհի մը կ'աւանդէ ձեռագործութեան, կտրի և  
ձեռագործի դասերը: Գիշերօթիկներու տարեթուական է  
12 ժամ. Ոսկի, որուն կէսը պէտք է հաստուցանել տա-  
րեշրջանին սկիզբը, և կէսը ծննդեան արձակուրդին:  
Դռնակն և երգչոցի համար կը պահանջուի 5, 3 և  
2 ու կէս ժամ: Ոսկի, դաստիարակութեան թիւին համե-  
մատ: Վարժարանին յառաջիկայ տարեշրջանը կ'սկսի  
Սեպտ. 11-ին (Ն. Տ.) 7-ը. իրիկունը:

Աւելի տեղեկութեանց համար խնդրել վարժարա-  
նին յայտագրելը, կամ դիմել Մը. Բիթի, Պոլսոյ-Հասու  
4. Պոլիս, կամ Գրեյ Տը. Ս. Էֆ. Գալաֆեանի, Ատե-  
նապետ խնամակալութեան, Ատարաղար: 10—8

# ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

**ՍԿԻՒՏԱՐ.** — Հոս օրուան նիւթն է Նոր-Թաղի բաժանումը : Այս խնդիրը քիչ մը չի նմանիր ընկերովի առեւտրական տան մը հաստատուելուն և ի վերջոյ « իտարէ չընէր կոր » ըսելով բաժնուելուն : Համմէ : (Եւ կամ հարսի մը կէսը չը հետ տուիկ չընելով մօրը տունը զրկուելուն . Ծ. Խ.) :

**ՆՈՐ-ԹԱՂ.** — Փառք Աստուծոյ, եկեղեցի ունինք, նոր և կարող Բարոզի մը ունինք, կարողագոյն Թաղ-Խորհուրդ մարմին ալ ունինք, դըպրոց մըն ալ ունինք, ուրեմն ի՞նչ ենիս պակաս է որ կերթանք կը միանանք միւս Թաղերուն . . . (ԽելՔերնի. Ծ. Խ.) :

**ՆԷՆԻ-ՄԱՀԱԼԼԷ (ՎՈՍՓՈՐ).** — Հոս շաբաթ օրուան մրրիկէն և անձրեւէն զոյգ մը նշանածներ հեղեղներէն քըշուելով եկան նետուեցան մինչեւ բիացան, ծնողք բարկացան, իսկ տեսնողները դահ գահ մարեցան :

**ԽՄԲԱԳՐՈՍՈՒՆ.** — Մեր նախորդ քօքեաճի աշխատակից Տիար Ս. Ա.ին կազդարարենք որ տարբեր ստորագրութեամբ մեր նախորդ հաւաքածոյներէն ոտանաւորներ ընդօրինակելով մեզի չի հրամցնէ, աւելի լաւ է կամուրջին գլուխը պոխճա կրէ քան թէ բանագողութեամբ գրականութիւն :

**ՆՈՅՆ.** — Մեզ հասած ստոյգ լուրի նայելով՝ անցեալ շաբթուան Վոսփորի լուրին հերոսը Գառնիկ էֆ. Գափամաճեանի նկատմամբ գրուածը կը հերքուի իբրեւ զրպարտութիւն : Բայց Գառնիկ էֆէնտի գիտէք թէ մեզի քանիի մալ եղաւ այս տողերը : Մնացածը ձեզ կը թողունք :

**ԱՅ-ՍԹԷՖԱՆՈՍ.** — Սկիւտարաբընակ երիտասարդ մը որ որսի մեռախը ճանչցուած է՝ վերջին երկու երեք տարիներուն մէջ, պրօքրօնի սիրոյն հոս հաստատուած ըլլալով, կը խընդրուի որ տունէն ետքախ եռոյսն զըրկուի իրեն, ի հանգիստ չորպա դարձած ոսկորներուն և թմրած տոտիսներուն : (Երեւակայեցէք երիտասարդ մը, որ փոխանակ ուրիշ բաներու՝ այդ տարիքին մէջ պըլտըրճինի մէռաք կուտայ, երեսի վրայ ձգելով ուրիշ շատ մը պրօքրօններ, որոնք իր սեւուլիք աշուկներուն ախը կը քաշեն Ծ. Խ.) :

**ՍԿԻՒՏԱՐ.** — Անցեալ շաբաթ գիշեր Մնակեանի Բարիգու աղիսները գիտելու համար Թատրոն հասնող ընտանիքներէն շատեր երբ անձրեւին պատճառաւ դռները դոց գտան, տեղացող անձրեւէն Սկիւսարի աղիսները դարձած տուն հասան : (Այս շաբաթ գիշերուան պահեցէք իշտահնիդ Ծ. Խ.) :

**ԳԱՏԸ-ԳԻԻԴ.** — Տեղացի օրիորդ մը առանց նկատի առնելու տիրող զովօղը, Յուլիսի պէս տեփօքի պտըտկելուն առթիւ երեք օր է սօլփաքօի հապ կը կըլլէ կոր . . . :

**ՍԱՄԱԹԻԱ.** — Հեռաւոր Թաղէ տեղւոյս եկեղեցին այցելող տիրացու խաֆալը պարոն մը, կերեւի թէ չէ կշտացած երկու տեղի անդամակցելէ, այս օրերս երրորդի մ'ալ ճանկ նետել կուզէ : (Հրամանքնիդ բան գործ չունիք միւսիւ . Ծ. Խ.) :

Ursofiuskr ԱՐՄԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. 6. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ

Պապը-Ալի հասեքի քիւ 52.

# ԱՐՍԷՆ ԼԻԻՐԷՆԻ ՏԱՐՕՐԻՆԱԿ ԿԵԱՆՔԸ

ԽԱՐՏԵԱՇ ԿԻՆԸ

Օր մը, Պարոն Ժէնպուա՝ Վէրսայի Լիսէին մաթեմատիքի բրոֆէսէօրը, հին առարկաներ ծախողի մը քով նշմարեց մահոկէնիէ փոքրիկ դրոսեղան մը՝ կրկնակ դարակներով։

— Ահա ինչ որ կ'ուզէի Սիւզանի նուիրել իր անունին տարեդարձին առթիւ մտածեց։

Հակառակ իր համեստ կարողութեանը լոկ իր աղջկանը հաճելի ըլլալու նպատակաւ, սակարկեց և վճարեց՝ վաթսուներ հինգ ֆրանքի գումար մը։

Այն պահուն երբ իր հասցէն կուտար, վայելչօրէն հագուած մարդ մը, առարկաներուն մէջ նայելով նշմարեց գրասեղանը և հարցուց։

— Քանի է գինը։

— Մտնուեցաւ պատասխանեց վաճառողը։

— Ա՜հ... Պարոնին թերեւս...

Պ. Ժէնպուա բարեկեց։ Անծանօթը յարեց։

— Պարոն, գիտեմ ինչ գին որ վճարեցիք, անոր կրկինը ձեզի կուտամ...

Պ. Ժէնպուա յամառ մարդ է և պատասխանեց։

— Կը ցաւիմ պարոն, ծախու չէ։

Անծանօթը-վերէն վար անգոյմ մը Ժէնպուան դիտեց և առանց խօսք մը ըսելու՝ ետ դարձաւ ու գնաց։

Ժամ մը վերջը, Սիւզան իր նուէրը կը ստանար։ Նոյն իրիկունը իսկ, այդ գրասեղանին դարակներուն մէջ տեղաւորեց իր թղթակցութիւնները, քարթ-ըսթալի հաւաքածոյները, և քանի մը հին յիշատակներ։ Պ. Ժէնպուա, առ իրիկունը հանդարտ մը քնացաւ։

Հետեւեալ օրը, ժամը եօթուկէսին Լիսէ գնաց։ Ժամը տասնին, Սիւզան հետեւելով ամէն օրուան սովորութեանը, հօրը գնաց։ Լիսէէն միասին տուն դառնալու համար։

Տուն եկան։ Ծաշէն առաջ դռաստի աղջիկը իր սենեակը գնաց։ Գրասեղանը իր տեղը չէր...

...Ինչ որ զարմացուց ամենքը սա՛ էր թէ՛ ուրիշ բան մը խախտած չէր սենեակէն, նոյն իսկ, Սիւզանի դրամապանակը՝ որ մէկ երկու ոսկի կը պարունակէր և առ գրասեղանին մարմարին վրայ ձգուած էր, մօտը եղող ուրիշ սեղանի մը վրայէն գտնուեցաւ։

Միակ հետք որ երևան եկաւ, ան ալ առջի օրուան բրոֆէսէօրին ունեցած միջադէպն էր։

— Ինծի անանկ եկաւ որ, ըսաւ, այդ մարդուն խնդրանքը երբ մերժեցի, մարդը հակառակութեան չարժուժ մը ըրաւ։

Վաճառականը հարցափորձեցին. ո՛չ մէկը և ո՛չ միւսը կը ճանչնար այդ երկու պարոններէն. գալով գնուած գրասեղանին, ինք քառասուն ֆրանքի գնած էր աճուրդէ մը, և ճիշդ գինով ծախած ըլլալուն վստահ էր։ Քննութիւնը շարունակուեցաւ բայց բան մը չհասկցուեցաւ։

Բայց Պ. Ժէնպուա համոզուած մնաց որ իրեն մեծ վնաս մը կ'ըլլար. թերեւս գանձ մը ծածկուած կար այդ գրասեղանին մէկ դարակին մէջ և այդ մարդն ալ տեղեակ էր ու ատոր համար հետապնդած էր։

Երկու ամիսներ անցան. և յանկարծ, իրարու հոռեէ՝ անակնկալներ և դժբաղդութիւններ։

Մալիսի առաջին օրը, ժամը հինգ ու կէսին, Պ. Ժէնպուա իրիկուան թերթին մէջ կարդաց։

«Երրորդ թիւած՝ Ասօսիասիօն քալարեսի վիճակահանութեան։ 23րդ. սեպտի 514 թիւը կը վաստակի՝ մէկ միլիոն ֆրանք»։

Պ. Ժէնպուա թմրութիւն մը զգաց, պատերը երերացին աչքերուն առջեւ և սիրտը պահ մը դադարեցաւ տրոփելէ։ 23րդ. սեպտի

514 թիւը իր ունեցած թիւն էր: Գնած էր իր մէկ բարեկամին ծառայութիւն մը մատուցանելու համար. որովհետեւ ինք երբեք բախշին չէր հաւատար. և ահա կը շահէր...

Շուտ մը յուշատետրը հանեց. 23րդ. սե-  
րիի 514 թիւը արձանագրուած էր, բայց  
տոմսակը...

Վազեց դէպի իր աշխատութեան սենեակը  
պահարաններու տուփը փնտռելու, որոնց  
մէկուն մէջ գրած էր այդ թանկագին տոմ-  
սակը: Սենեակէն ներս մտնելուն կեցաւ նո-  
րէն դողդոջուն և սիրաւ տրոփուն: Պահա-  
րաններու տուփը հոն չէր գտնուէր և ա-  
նանկ կերեւար թէ՛ չաբաթներ կար որ հոն  
չէր:

— Սիւզան... Սիւզան...

Սիւզան պտոյտէ կը վերադառնար և շուտ  
մը վեր եկաւ. ժէպուտա խեղդուկ ձայնով  
մը ըսաւ.

— Սիւզան... տուփը... պահարաններու  
տուփը:

— Որը:

Այն որ Լուվրէն հինգշաբթի մը բերած էի և  
սա սեղանին ծայրը կը գտնուէր:

— Սակայն յիշէ՛ հայր որ միասին ան-  
զաւորեցինք...

— Ո՛ւր, պատասխանէ պիտի մեռցնես  
ղիս:

— Ո՛ւր, բայց գրասեղանին մէջ...

— Այն գրասեղանին՝ որ գողցուեցաւ:

— Այո՛:

— Այն գրասեղանին մէջ որ գողցուե-  
ցաւ:

Եւ այս խօսքը կամաց մը արտասանեց,  
տեսակ մը վախով, յետոյ աղջկանը ձեռքը  
սեղմելով և աւելի կամաց ձայնով ըսաւ.

— Նիլիոն մը կը պարունակէր, աղջիկս:

— Ա՛հ հայր, ինչու տապալուց չ'ըսիր,  
մրմրաց միամտութեամբ:

— Միլլիոն մը, յարեց, Մամուլի վիճա-  
կահանութեան շահող թիւն էր:

Սիւզան մտածելէ ետքը:

— Բայց հայր նորէն քեզի կը վճառէն,  
ըսաւ:

— Ինչո՞ւ, ինչ ապացոյցի վրայ:

— Ապացոյց չունիս:

— Այո՛, հատ մը, որ պահարանին տա-  
լին մէջն էր:

— Եւ այն ասին:

— Այն ասին միւսը պիտի գտնէ...

— Տեսնանք հայր, պիտի կրնաս դէմը  
ելլել:

— Ով գիտէ՛, ով գիտէ՛, այդ մարդը  
ուժով ըլլալու է, ինչ հնարքներ կը մըտա-  
ծէ, յիշէ սեղանին դործը...

Ընդոստ տեղէն ցատկեց և մէկ ոտքը  
գետին վարնելով.

— Է՛հ ո՛չ... ոչ, իբր չպիտի ըլլայ միլ-  
լիոն մը ֆրանքը, իբր չպիտի ըլլայ, ինչո՞ւ  
իբր ըլլայ...: Եթէ գտնուի երթայ կը  
բռնեն, ա՛խ կը տեսնենք մարդուկս:

Քանի մը վայրկեան ետքը սա հեռագրի-  
րը կ'առաքէր.

Վարիչ Քրէտի Ֆոնսիէի

Գարուչին փողոց. Բարիզ

«23րդ. սերիի 514 թիւն սերն եմ. ամեն  
անժամօք դիմումներու արգելք դրեմ.

Ժէյ-Պոնիս

Գրեթէ նոյն միջոցին, Քրէտի Ֆոնսիէ  
կու գար հետեւեալ հեռագիրը.

«23րդ. սերիի 514 թիւը իմ սեփական-  
ութիւնս է».

ԱՐՍԷՆ ԼԻԻԲԵՆ

Իսկոյն, Քրէտի Ֆոնսիէի կողմէ կղած  
փնտրութեան սա՛ կրեւան եկաւ թէ՛ 23րդ. սե-  
րիի 514 թիւը, Քրէտի Լիւնէի Վերսայի  
մասնաճիւղին միջնորդութեամբ, հրետանիի  
հրամանատար Պէսսիի ծախուած էր: Եւ  
հրամանատարը ձիէ վար իյնալով մոռած էր,  
ու իր մահու ընէն շատ տուն առաջ բարե-  
կամի մը թողած էր տոմսակը:

— Այդ բարեկամը ես եմ, ըսաւ Պ. Ժէյ-  
պուտա, հրամանատարին հետ ժողով յարա-  
բերութիւն ունէի և իրեն մէկ նեղ վայրկե-  
անին այդ տոմսակը գնած եմ:

— Ինչ ապացոյց կայ:

— Նամակը՝ որ ինձի աղ առիթով գրած  
էր:

— Ինչպէս նամակ:

— Նամակ մը որ գնդասեղով տոմսակին  
վրայ կպցուած էր:

— Յուշուր այդ նամակը:

— Բայց գողցուած գրասեղանին մէջ կը  
գտնուէր:

— Գտե՛ք զայն:

(Շարունակելի)

# ՄԵԾ Վ ԱՃԱՌԱՏՈՒՆ


ԱՐԱՆԳ, ԿԱՆԱՆԳ ԵՎ ՏՊԱՅՈՂ

ԱՐԱՆԳ, ԿԱՆԱՆԳ ԵՎ ՏՊԱՅՈՂ  
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

## Գ. ԷՐՄԵՆԵԱՆ ԵՎ ԸՆԿ.

Գ. Պոլիս, Սուրբան Համալս, Թոփալեան խան  
Սոյն վաճառատունը, որ տարիններէ  
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց  
տոկոսներով թեմաք և գիններու անմրցելի  
աժանութեամբը շահած է բոլոր իրեն  
գինով յաճախորդաց վստահութիւնը,  
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր  
հագուստներու, կանանց բեղուններու  
և տղայոց շիք և գինացկուն ֆաբրիկ-  
ներու ճոխ մթերք մը պատրաստ ունի,  
որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն  
անոնց, որոնք պէտք ունին ներկայ  
եղանակին հագուստի և ուրիշ նման-  
ընեակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 ղըշ է:  
Գաւառներէն յանձնարարութիւնք  
փութով կը կատարուին: 50—51



ԱՌԻԹԵՆ

ՕԳՏՈՒԵՑԷՔ

ՓՈՒԹԱՅԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճեռալ պէյ խանին  
տակ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,  
որք ուղղակի ներածուելով Սեյլանէ,  
Ջիմաստանէ, Հնդկաստանէ, Ճապոնէ եւ Ճա-  
բոնէ:

Ամենէն զգուշահաճներն իսկ կը-  
նան գոհանալ թէյերու թարմութեամբ  
հոտովն ու համովը:

Ֆնտուեցէք մանաւանդ իրենց յա-  
տուկ խառնուրդները, որք կը ծախ-  
ուին մեծ և փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մարտիրոս:

ԿՈՒՉԷՔ ՍՏԱՆԱԼ ՉԵՐ ՈՒՉԱՅԵՐ ԿՈՍՏԻՆ ՊԱՐԶՈՎ ՈՒ ԱՆԱԽԱԼ

## ՕՐԷՐ ԿԸ ՄՕՏԵՆԱՅ

ԳՊՈՍՏԱՆ ԵՄԵՐ ՇՐՈՒՄ

ԻՆՉ ԲԱՆԻ ԿՐՆԱՔ ՊԵՏԵՐ ՈՒՆԵՆԱԼ

ԳՊՐՈՑԱԿԱՆ ԼԱԻԱԳՈՅՆ ԴԱՍԱԳՐԲԵՐՈՒ՝ ՈՐՈՖ ՎԱԵՐԱՅՈՒԱԾ  
ԸՂՄԱՆ ՊԱՏ. ՈՒԱՄ. ԽՈՐՀՐԴԷՆ:

ՏՆՕՐԷՆ, ԴԱՍՏԻԱՐԱԿ, ՕԳՆԱԿԱՆ ՈՒՍՈՒԹԵՆԵՐՈՒ՝ ՈՐՈՖ ԸՂՄԱՆ  
ՎԿԱՅԵԱԼ, ԿԱՐԿԵՏ ՈՒ ՎՈՐԱՌԱՌ:

ՄԱՆԿԱՊԱՐՏԵՂԻ, ՁԵՌԱԳՈՐԾԻ ՈՒ ԳԾԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԻԹԵՐՈՒ՝  
ՈՐՈՖ ԳՆՈՎ ԱԾԱՄ ԸՂՄԱՆ ՈՒ ՏԵՍԱԿՈՎ ԽԱՎԱԳՈՅՆ:

ՏՂՈՑ ՆՈՒԷՐԻ շԱՄԱՐ ԶԱՆԱԶԱՆ ՆԻԹԵՐՈՒ՝ ՈՒ ԹՈՒՄ, ԳՐԻՅ, ԱՆԽԱՆ,  
ԿԱՊԱՄԱՐ, ԱՄՏԻՅ, ԲԱՆԱԿ, ՏԵՏՐԱԿ, ԲԱՐԻՅ, ԲԱՐՏԱԽԱՍԱԿ  
ԿԱԼԻՆ, ԳՓԱԳՐՈՒԹԵԱՆ ԳԱՆԱԳԱՆ ՆԵՐԿԵՐ ԵՆԻ:

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՈՒԷԻ Է ԳՈՐԾԻ ՄԸ. ՎԿԱՅԱԿԱՆ, ՎԻՃԱԿԱՅՈՅ, ԲԱ-  
ՐԵՆԻՅ, ԿԱՍՈՒԱՆԻՅ, ԱՅԳԱԲԱՐՏ, ԵՐԿՐԵՐԱԿԱՆ, ՆԱՆԱԿԱԳՈՒԼԻ  
ԿԱՆԱՐԱՆ ԵՆԻ: Ինչ որ ալ ըլլայ սակայն ձեր պէտքը, ԳՐԱՍԱՆ  
անգամ մը ՅՈՎԶԱՆԷՍ ԷՍԿԻԵՆ ԳՐԱՍԱՆ պայմանները  
վստահ ըլլալով թէ խաբուած չպիտի ըլլաւ, քանի որ նոր ԵՐԿՐԵՐ  
առաջիւ աժէն հեղինակներու դասագրքերէն նոր ու ճոխ մթերք  
մը աւելցուած է արդէն եղած տեսակներուն վրայ. ինչպէս նաեւ  
մեծագործի մանկապարտեզի ու զոց նուերի համար առատաբար:

Հարցուի՞ր՝ ու անհեշտապէս պիտի պատասխանուի

պարտեզի՞ր՝ ու պիտի տեսնաւ որ օրին

ԼԱԻԱԳՈՅՆ ԳԻՆ ԼԱԻԱԳՈՅՆ ԶԵՂԶՈՎ

ԿԱՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՆԹԻՒՆ

ԳՐԱՅԵՑԷՔ Կ. ՊՈԼԻՍ ԽՈՐԱՄԱՆԵԱՆ ԽԱՆ ՕԶԱՆՆԷՍ ԷՍԿՐԵԱՆ ԳՐԱՄԱՆ

# Ա Պ Ա Ռ Ի Կ

Օ ԱՄԻՍ ՊԱՅՄԱՆԱԺԱՄԷՆ ՅԵՏՈՑ ԱՆՊԱՅՄԱՆ ԱՊԱՌԻԿ  
[5000] ԱԻԵԼԻ ՏԵՍԱԿ ԻՐԵՂԵՆՔ 5000

Տեղական և Բարիդի 14 և 18 աստիճան ոսկւոյ վրայ բազմատեսակ գոհարեղէններ, օղ, մատնի, ասեղ, հայլն. նաեւ անուաներու սկզբնատառով գոհարաւարդ մատանիներ, ոսկի, արծաթ ժամացոյցներ և նորաձեւ չղթայներ, ասոնցմէ զատ ամէն եղանակի յատուկ պատրաստ և չափու վրայ զգեստներ, կօշիկներ ու գլխարկներ, արանց, կանանց և տղայոց համար: Նաեւ մուշամպա վերարկուներ, բուրդէ և մետաքսէ չրջազգեստի կերպաններ, պատրաստ ճերմակեղէններ նաեւ խասա, ամերիգան, պասմա, եւայլն. և զարդի վերաբերեալ պիտոյք, մեքենաներ լուսպքի, լուսանկարի, կրամօֆօն, ինչպէս նաեւ կարի (ձօնս. Նովման) հայլն:

Ունինք նաեւ եւրոպական նուրբ ճաշակով պատրաստուած կահ կարասիք, հիւրանոցի, ննջասենեակի, ճաշարանի և խոհանոցի վերաբերեալ ամէն իրեղէնք, ամէն տեսակ վառարաններ, նաեւ բաղնիքի, խոհանոցի եւրոպական շարժուն օճախ ելն:

Վաճառատունս իր տեսակին մէջ միակն է որ չահած է հանրութեան վստահութիւնը, գնահատուած է նաեւ իր ապրանսաց տոկոսնութիւնը, նրբութիւնը և աժանութիւնը:

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

Շաբաթական և ամսական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են:

Հաճեցէք գիմել ՀԵՐՃԱՅԻ վաճառատուն

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐԶԱՅ ՄԵԾ ՓՈՂՈՅ ԹԻԻ 13

50 - 40

**Փ Ա Լ Ա Գ Ա Յ Ե Ա Ն**  
**ԱՂԶԿԱՆՑ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ**  
**ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ**  
**ԳԻՇԵՐՈՒԿ ԵՒ ՑԵՐԵԿԵԱՅ**  
Կ. Պոլիս, Գասք-գիւղ, Մէօհիւրսաւ  
նասսէսի.

Յիդ Տարեօրացի

Մասնագէտ ուսուցիչներու և ուսուցչուհիներու ձեռամբ, տոմարային ուսումներէ և գիտական անհրաժեշտ ծանօթութիւններէ զատ, հիմնական կերպով կ'աւանդուին Հայերէն, Օսմաներէն, Ֆրանսերէն, Անգղիերէն և Գերմաներէն լեզուները՝ հանդերձ խօ-

սեղաւարտութեամբ (բռաթիֆ), ինչպէս նաեւ Գծագրութիւն, Տնարարութիւն, Կար ու Ձեւ, Ասեղնագործութեան զանազան տեսակները (ձեւքով և մեքենայով), ձայնական և դործիական երաժշտութիւն, մասնաւորապէս Դաշնակ և Զուլակ: Գիշերօթիկները կը վայելին կատարեալ սնունդ և ընտանեկան անթերի խնամք, առողջապահիկ պայմաններու մէջ:

Բանակցութեան համար զիմել ի վարժարան առ Տեսուչն կամ առ Տեսուհին: Մանրամասն տեղեկութիւն կարելի է ստանալ նաեւ, Գշ. Եշ. Շք. օրերը ժամը 5 և 9 զիմելով ի Գրատուն «ԳԱՐՈՒՆ», Մեծ Նոր խան, վերի յարկ, թիւ 55:

Աշակերտուհեաց վերամուտը տեղի պիտի ունենայ Սեպտ. 3, Բշ. օր:

Հիմնադիր-Տնօրէն

Ե. Գ. ՓԱԼԱԿԱՆՇԵԱՆ